



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36  
հեռ. (0264) 6-15-11  
Էլ. հասցե: info\_gavar@aarhus.am

N AA - 021

« 23 » Դեկտեմբերի 2014թ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

### Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն մարզում գայլերի հարձակումներից վնասների հետ կապված.

- Տրամադրել վերջին 4 տարիների ընթացքում մարզի այն համայնքների ցուցակը, որոնք տուժել են գայլերի հարձակումներից /տրամադրել նաև տուժած բնակիչների ցուցակը, հասցված վնասների չափը և թե՛ ինչ չափով է փոխհատուցվել՝ յուրաքանչյուր համայնքի համար առանձին/.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան